ՎԴ/5116/05/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 հունվարի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/5116/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը,

ՊԱՐԶԵՑԻՆՔ

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 19-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունվարի 12-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին, 51-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 9-րդ հոդվածի 3-րդ մասին, 12-րդ հոդվածի 1-ին մասին, 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 24-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ մշակույթի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 854-Ա հրամանով հաստատված կանոնադրության 2-րդ և 61-րդ կետերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ հանրային իրավահարաբերություններից*

չծագող հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ, և դրանց վերաբերյալ որևէ վեճ առաջանալու դեպքում այդպիսի գործերը՝ որպես քաղաքացիական գործեր, ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, իսկ պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման իրավաչափության առնչությամբ վեճը հանրային բնույթ չունի: Թեև ՀՀ կառավարությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է վերջինիս հանրային-իրավական կարգավիճակը և տվյալ դեպքում վերջինս հանդիսանում է վիճելի իրավահարաբերության կողմ, սակայն սույն գործով վիճելի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում ՀՀ կառավարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, որպիսի պարագայում անձի հարաբերությունները ոչ թե պետության, այլ ՀՀ կառավարության՝ որպես վերջինիս հիմնադրի հետ են, այսինքն՝ իրավահարաբերությունները չեն ծագել պետական կառավարման մարմնի գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Ավելին՝ սույն հայցադիմումով ներկայացվող վեճը կրում է քաղաքացիաիրավական հարաբերությունների բնույթ՝ ներառված է քաղաքացիական օրենսդրության կարգավորման տիրույթում և ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, ըստ այդմ՝ դուրս է վարչական դատարանի ընդդատության շրջանակներից:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված պահանջը բխում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով չսահմանված քաղաքացիաիրավական իրավահարաբերություններից, որպիսի պարագայում հայցը ենթակա չէ քննության վարչական դատարանում, և այն պետք է

վերահասցեագրել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/1621/05/14, 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 և 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ տվյալ գործը ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով, հետևաբար, համաձայն չէ ՀՀ վարչական դատարանի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին վերահասցեագրելու որոշման հետ, որպիսի պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, գտնում է, որ վերը նշված հարցերին սպառիչ պատասխան տալու և թիվ ՎԴ/5116/05/23 գործի ենթակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նմանատիպ գործերը բազմաթիվ են, և պրակտիկայում երկու դատարանների միջև առկա է նմանատիպ գործերի ենթակայության վերաբերյալ անորոշություն»*[2]:

---

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 1-ին, թերթեր 134-139:
[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 17-19:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5116/05/23 գործն ըստ հայցի՝ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընդդեմ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահները, (…) գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատների նախագահների մասնակցությամբ: Նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք: Որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

7. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (…)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը.*

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ին) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.*

1) ***նորմատիվ իրավական ակտ՝*** *Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար. (...)*

3) ***ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝*** *Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ. (...)*

5) ***անհատական իրավական ակտ՝*** *նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց. (...)»:*

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ (...)*

4) բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված փոփոխություններն իրականացվում են նորմատիվ իրավական ակտերի գործողության դադարեցման համար նախատեսված կարգով ու պայմաններով և առաջացնում են իրավական

ակտի գործողության դադարեցման համար նախատեսված համապատասխան հետևանքներ (...)»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:*

2. Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Օրենսգրքերում փոփոխություն կամ լրացում կատարվում է օրենքով:

3. Նորմատիվ իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին) (...)»:

«Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու կարգի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 12-ին, ուժը կորցրել է 2002 թվականի մայիսի 31-ին) 2-րդ հոդվածի համաձայն՝ *«Նորմատիվ իրավական է այն ակտը, որը սահմանում, վերացնում կամ փոփոխում է ֆիզիկական անձանց կամ նրանց մի մասի, իրավաբանական անձանց կամ նրանց մի մասի համար պարտադիր կատարման ենթակա վարքագծի կանոններ»:*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 31-ին, ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 7-ին) 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:*

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

Նորմատիվ իրավական ակտ է համարվում նաև նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի գործողությունը դադարեցնող իրավական ակտը, նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների իրավական նորմ չպարունակելու դեպքում:

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում և սույն օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած վարքագծի կանոնն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար»:*

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Իրավական ակտում դա ընդունող մարմինը նշում է կատարում դրա բնույթի մասին «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) և «Լ» (ներքին, լոկալ) տառերով: Սույն նշումները կատարվում են իրավական ակտի հերթական համարից անմիջապես հետո:*

Համապատասխան նշում չունեցող իրավական ակտերը համարվում են անհատական իրավական ակտեր: Դրանց նորմատիվ բնույթ ունեցող դրույթներն իրավաբանական ուժ չունեն:

Անհատական իրավական ակտի նշումով ընդունված իրավական ակտերի՝ նորմատիվ բնույթ ունեցող դրույթներն իրավաբանական ուժ չունեն»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Իրավական այլ ակտերում փոփոխությունները կամ լրացումները կատարում են միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Իրավասություն չունեցող մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով (...)»:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին) (…)»:*

9. ՀՀ Վճռաբեկ դատարանը, *««Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ Կառավարության, երրորդ անձինք՝ Երևանի քաղաքապետարան, «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0518/05/19 որոշմամբ անդրադառնալով նորմատիվ և անհատական իրավական ակտերի հատկանիշներին, արձանագրել է. *««[Ն]որմատիվ իրավական ակտ» հասկացության վերը նշված բնորոշման հիմնական տարրերն են.*

- նորմատիվ իրավական ակտն ընդունող սուբյեկտները. նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից՝ վերջիններիս իրավասություն գործունեության արդյունքում, կամ համաժողովրդական կամաարտահայտության արդյունքում,

- իրավական ակտի բովանդակությունը, այն է՝ վարքագծի պարտադիր կանոններ բովանդակելը,

- իրավական ակտի հասցեատերերի շրջանակը, այն է՝ անորոշ թվով անձանց վերաբերելը:

(…)

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձևական առումով նորմատիվ ակտի տարբերակիչ հատկանիշներն են դրա կառուցվածքը, ընդունման ու ուժի մեջ մտնելու հատուկ ընթացակարգերը (…)»[3]*:*

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *««Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձինք՝ Երևանի քաղաքապետարան, «Ի ԷՄ ՍԻ» ՓԲԸ* վարչական գործով 2023 թվականի հունվարի 13-ի թիվ ՎԴ/0518/05/19 որոշումը:

մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատարանին են վերապահված նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը, որոնց շրջանականում են ընդգրկվում նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության ընդունած նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը:

Ընդ որում, ի տարբերություն մինչև 2018 թվականի ապրիլի 7-ը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, որն իրավական ակտի նորմատիվ կամ անհատական լինելու բնույթը պայմանավորում էր այդ մասին համապատասխան նշում կատարելու հանգամանքով՝ ըստ էության սահմանելով անհատական նշում պարունակող ակտի՝ նորմատիվ բնույթ ունեցող դրույթներ սահմանելու իրավական հետևանքները, ապա ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս ակտի նորմատիվ կամ անհատական բնույթը պարզել այդ ակտի բովանդակության ուսումնասիրության արդյունքում: Հետևաբար, նախքան «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված իրավական ակտերի բնույթը պարզելիս, էական նշանակություն ունի իրավաստեղծի կողմից տվյալ ակտում դրա բնույթի վերաբերյալ կատարված նշումը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 19-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ

Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[4],

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ թեև ՀՀ Կառավարությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, հանրային գործառույթներ իրականացնելու հանգամանքը կանխորոշում է վերջինիս հանրային-իրավական կարգավիճակը և տվյալ դեպքում վերջինս հանդիսանում է վիճելի իրավահարաբերության կողմ, սակայն սույն գործով վիճելի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում ՀՀ Կառավարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Նման պայմաններում անձի հարաբերությունները ոչ թե պետության, այլ ՀՀ Կառավարութան՝ որպես վերջինիս հիմնադրի հետ են, այսինքն՝ իրավահարաբերությունները չեն ծագել պետական կառավարման մարմնի գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, որպիսի պարագայում հայցը ենթակա չէ քննության վարչական դատարանում և այն պետք է վերահասցեագրել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան[5],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ տվյալ գործը ենթակա չէ քննության ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով, որպիսի պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, գտնում է, որ վերը նշված հարցերին սպառիչ պատասխան տալու և թիվ ՎԴ/5116/05/23 գործի ենթակայության հարցը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նմանատիպ գործերը բազմաթիվ են և պրակտիկայում երկու

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

դատարանների միջև առկա է նմանատիպ գործերի ենթակայության վերաբերյալ անորոշություն[6]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է, նախ պարզել՝ թե արդյո՞ք սույն գործով վիճարկվող՝ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումը հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ, թե՝ ոչ:

Այսպես, վիճարկվող ակտի 4-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2002 թվականի ապրիլի 17-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 419 որոշման Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպված թատրոնների ցանկի 12-րդ կետը: Նշված որոշումն ընդունվել է 2002 թվականի ապրիլի 17-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ գործել է «Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու կարգի մասին» ՀՀ օրենքը, որով իրավական ակտերի բնույթի վերաբերյալ նշում պարունակելու պահանջ նախատեսված չի եղել: Ըստ այդմ՝ ՀՀ Կառավարության թիվ 419 որոշման բնույթի մասին նշում այդ ակտում կատարված չէ: Այնուհետև, նշված որոշման մեջ արդեն իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում կատարվել են փոփոխություններ՝ «Ն» տառով նշում պարունակող տարբեր իրավական ակտերով, որպիսի հանգամանքով էլ, ըստ էության, պայմանավորվել է վերջիններիս նորմատիվ իրավական բնույթը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը իրավական ակտերի նորմատիվ կամ անհատական բնույթը պայմանավորել է համապատասխան նշում պարունակելու հանգամանքով՝ սահմանելով համապատասխան իրավական հետևանքներ այդ կանոնը չպահպանելու համար (օրինակ՝ անհատական իրավական ակտի նշումով

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ընդունված իրավական ակտերում նորմատիվ բնույթ ունեցող դրույթների առկայության դեպքում դրանց իրավաբանական ուժ չունենալու դրույթը):

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ իրավաստեղծ մարմինը կարող էր կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով, իսկ թիվ 419 որոշման մեջ փոփոխությունները կատարվել են նորմատիվ բնույթ ունեցող ակտերով, ապա վերոգրյալից հետևում է, որ իրավաստեղծը, ինչպես ՀՀ Կառավարության թիվ 419 որոշումը, այնպես էլ դրանում փոփոխություններ նախատեսող որոշումները դիտարկել է որպես նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտեր:

Ինչ վերաբերում է սույն գործով վիճարկվող թիվ 701-Ն որոշմանը, ապա այն ընդունվել է 2023 թվականի մայիսի 11-ին, այսինքն՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի գործողության ժամանակ, և ինչպես արդեն իսկ նշվեց, վկայակոչված որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Կառավարության՝ 2002 թվականի ապրիլի 17-ի թիվ 419 նորմատիվ իրավական ակտով հաստատված ցանկի 12-րդ կետը: Այսինքն՝ դրանով նույնպես փոփոխություններ են կատարվել թիվ 419 որոշման մեջ:

Ըստ այդմ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով, ուստի նշված փաստի հաշվառմամբ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումը պետք է որակվի որպես նորմատիվ իրավական ակտ:

Վերոգրյալի հիման վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ գործերը, իսկ սույն գործով վիճարկվող ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն իր բնույթով

նորմատիվ իրավական ակտ է, հետևաբար սույն գործով կողմերի միջև ծագած վեճը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

13. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5116/05/23 գործն ըստ հայցի՝ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընդդեմ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/5116/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻՆՔ

թիվ ՎԴ/5116/05/23 գործն ըստ հայցի՝ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընդդեմ ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 701-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ